ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» Նոյեմբեր 2023թ. ՆՄՈ/216-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ՆՄՈ/441-2022 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 20-ի N059-Ա որոշումը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արմավիր 1»՝ Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի, «Արմավիր 2»՝ Արմավիր համայնքի Արաքս գյուղի և «Արմավիր 3»՝ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի, Այգեվան, Լենուղի, Լուկաշին, Խանջյան, Հացիկ, Մայիսյան, Նորավան և Սարդարապատ գյուղերի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատելու մասին» ՆՄՈ/441-2022 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N3 հավելվածի «Արմավիր 3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի Արմավիր քաղաքի գործառնական գոտիներում կառուցապատման չափանիշների «ԲՆԿԳ-3» (միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտի) տողի 9-րդ սյունակի՝ «5-7 վերգետնյա հարկ,

(նկուղային հարկի)» բառերը փոխարինել «3-16 վերգետնյա հարկ, /(նկուղային հարկի)՝ բացառապես 04-001-0202-0001 ծածկագրով, ք. Արմավիր Հ. Բաղրամյան փողոց 39 հասցեում գտնվող 4,645 հա մակերեսով հողամասի համար» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 23.06.2023 09:22:11 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505